## 32. ԹԱԿԱՎՐՈԻ ՓԵՍԵՆ

Կէլնի մեյ թակավորմ. իրեքյ լաճ:

Մեռնելու օրերին իրեքյ լաճերացն էլ կկանչի. կասի. - Էկե՛քյ, ես կմեռնեմ:

Ժեռչ լաճուն կասի. - Ժեռ՛չ լաճ, քյե կանեմ իմ տեղ թակավոր:

Օրթանջուն կանի ջիճան սարմսաքյարի:

Պստիկին էլ կասի. - Էսա էրկու փետն էլ քյե՛, բալա՛մ, առ էսա էրկու փետ քյե, կնւս էսա տնից: Որ մարթ էլնես՝ քյե խասնող չէլնե:

Պստիկ լաճ կառնի փետեր, կէլնի ուր սեիս կուտա առճև, ուր ծին կխեծնի, քշի կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա. շատ. քիչն աստված կիտի, ախպրի վրեն կիճնի:

Խսւց խլսէր, մնացեր ին անոթի: Թակավրու լաճ կասի. - Սեյի՛ս, էլի կնսւ էնա տաշտի վիցկվորից քիչմ խսւց պէ, ուտենքյ, անութի ենքյ:

Վաճիրն էլավ կնաց: Թակավրու տղին ջկարեն ընցեր էր. իխան ծոցից պիտի կրայ խանեը զարներ. փետերն ինգյավ ծեռ:

Պսրկացալ. խանեց էն փետեր. իթալ գյետին. ասաց՝ իմ խերն էլ պան չկեր, պան իտուր զի ճեղիե:

Էն գյսխ որ փետերն ինգյան զյետին, ջուխտս ւրաք թռան տյուս. ասին. - Է՜, իգյի՛թ, աստվորն ւսվիրե՞նքյ. թե՞ շինենքյ:

Կասի. - Նա՛ ավիրեքյ, նա՛ շինեքյ, անոթի ենքյ, քիչմ խաց պերեքյ. ուտենքյ:

- Դե՛. տյու կնա նստի, մենքյ խաց կպիրենքյ:

Թակավորու լաճ նստավ. սեղան կոտմիշ էլավ առճև:

Թակավրու լաճ էլյավ կայնավ, ծեռ չի տուր ինե. - Պիտի չուտեմ՝ չում իմ սեյիս գյա:

Սեյիսն էն դեխեն էկավ:

Ասաց. - Սեյի՛ս. խաց պիրի՞ր:

Ասաց. - Կնացի մո վիցկվոր. խաց կիրեր էր. պռծեր էր:

Ասւսց. - Արե՛, էրթանքյ. էսա դանին աստված մե տվեր է, մեր խացն ուտենքյ:

Նստան ուրենց խաց կերան:

- Դե, սեյի՛ս, - ասաց. - առ էսա իմ ծին, առ էսա իմ թուր. առ կնւս քյե խամար, տար կնա ծախի, տյու քյո քյուլֆթին իդարեմ արա:

Թակավրու լաճն էր. էլավ ճամբախ պռնեց. կնաց: Կնաց քյաղքյիմ մեչ: Կնաց փողըճդեր ֆռաց: Իրիշկաց՝ պստիկ տյուում կեր էտա փողնին մեչ: Տոտ թփեց. մեյ խատ փիր խալիվորմ էկավ տոտն իպան:

Ասաց. - Բաբա՛ղ, կիշրվա սըթմրատեղմ կուտա՞ս զի:

Ասաց. - Որդի, տեղ չունեմ:

Ասաց. - Խերի՛քյ ի, ինչ կանղնար էլ էլնի, խերիքյ ի:

Իրիշկաց՝ էտա խալիվորու տակ մեյ սև մորթմ, էծու մորթմ կեր:

Ասաց. - Բաբա՛ղ, զի կանե՞ս քյե լաճ:

Ասաց. - Ո՛նչ ուտելիքյ ունենքյ, ո՛նչ խմելիքյ ունենքյ: Գյեռ ես քյե արեցի զի լաճ:

Լաճն էլավ կայնավ տյուռ, ուր փետեր խանեց տյուս, թալեց գյետին, ջուխտմ արաբ էլմն տյուս:

Ասաց. - Է՜յ, իգյիթ, աշխարհ ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

Ասաց. - Ծեռքմ յաթաղ ընծի խամար պե, ծեռքյմ էլ բաբալղի խամար պե, մեր խաց, կերակուլ:

Արաբներ ինոր ուզածներ պիրին, նստան ուրենց խաց կերան:

- Է՛, - ասաց, - բաբա՛ղ, քյե թաղարամմ կա՞: Ես պիտի քյեռշկ սարեմ շինեմ ըստեղ:

Ասաց. - Ունեմ թաղարամ:

Ասաց. - Ապա քյո գյործն ի՞նչ ի էլե ժամանակին, որ տունմ էլ չես կարցե շինել:

- Ես թակավրու շախկաշին եմ, կէրթի, կնստի թակավրու մոտ, կասի, կզրուցի, կծծղացուցի, ինոր քյեֆ կպիրի, օրեն իրեյհ դիր իմ խաց կուտի, կես կիշերին տառնի կուգյի իմ էսա կուլուբի մեչ կպառկի: Էլ տուն ի՞նչ անի, տեղ ի՞նչ անի:

- Բաբա՛ղ, դե տյու էլի կնա քյե տեղ քյնի:

Տղեն էլմավ տյուս, ուր փետերն իխան իթալ գյետին: Ջուխտ արաբ կայնան:

- Է՛, իգյի՛թ, - ասաց, - ատվոր ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

- Նմ՛ ավիրեքյ, նմ՛ շինեքյ: Ըսկուն կռնախմ պիտի շինեքյ վեր էսա կուլիբին, որ թակավրու կռնխի վերեն խով անի:

Առատուն թակավորն էլմավ վեր քյնուց: Կանչեց ուր վմզիրին:

Ասաց. - Վմզի՛ր, ըսկնեմ տարի ըսկնա քյոշկ սարա մենքյ մեր քյաղաքյի մեչ չենքյ տիսե:

Բաբալղ առատուն քյնուց էլմավ վեր: Տղեն ինոր ասաց. - Էլի՛, կնմ թակավրու աղչիկ ուզի զիկ:

Ասաց. - Ջա՛նմ, էտա էլմծ պա՞ն ի: Ես թակավրու շախկաշին էլնեմ, ի՞նչխ էլնեմ էրթմմ թակավրու տուռ: Չեմ էրթմ:

Շատ աղաչմնքյ ինգյմվ թակավրու լաճ:

Բաբալղ էլմավ կնմց, նստավ վեր խնամաթոռան: Խմբմր տվին թակավրուն, թե քյո շախկաշին իկերի: Իկե քյո աղչիկ կուզի:

- Կանչե՛քյ, թո գյմ, - ասաց:

Կանչեցին էկավ շախկաշին:

Թակավորն ասաց. - Խեր ըլնի, ընչի՞ ես իկե: Ըսկնեմ օր տյու դեռ՞ր իր չէր էրևէ:

Ասաց. - Իմ լաճ կարիքութնից իկեր ի: Էսօր իկեր եմ ըստմ, քյո աղչիկ կուզեմ իմ տղին: Չկարծես, թե ես ֆուկարա եմ, քո չափին մարթ եմ:

Թակավորն ասաց. - Դե՛ լավ, բաբալղ, քյեզնից կուզիմ քյառսուն խմզմր խատ չիլ ճավռաչ դևե: Իդոնց պեռներ բյութուն ակնունքյ ջավահիր էլնի: Որ պիրես, իմ աղչիկ կուտամ քյո լաճուն, որ չպիրես, քյո վիզ կզմնեմ, քյո լաճուն էլ խետը, դե՛, էլի կնմ:

Խալիվորն էկավ, բաշլայեց ճամխի կես տեղեն ուր խալվներ խանել, ճղճղել, թա̈լեց ճամբախ էկավ. էկավ խասավ տուն: Մեչ տան փռաց, ուր սև փոսթ կնդավ, թալեց ուր տակ, նստավ:

Լաճն էկավ տռնեն, ասաց. - Բաբա՛ղ, տյու ծու՞ռ ես, տյու քյո խալվներ ընչի՞ ես ճղճղե:

Ասաց. - Տյու իմ տեղն էլնիր քյե կխեղդիր:

Ասաց. - Ջա՛նմ, ընչի զի կխեղդի:

Լաճն բաբալղի սիրտն առեց, ասեց. - Թակավոր քյե ի՞նչ պատասխան իտուր:

Ասաց. - Ասպած քյո տուն ավիրի, քյառսուն խա̈զա̈ր խատ դնե տյու ո՞ր տեղից պիտի պիրես: Ինոնց պեռներ բյութուն ակնունքյ ջավահիր: Կպիրես՝ կպիրես, չես պիրե՝ քյո վիզ կզւանե, իմն էլ խետ:

Ասաց. - Էտա եհ՝ ինոր ուզած:

Էլավ ծեռքյմ խալավ իպե խագյուց խոր, ուր փետեր իթա̈լ գյետին, ա̈րա̈բներն էլան տյուս:

Ասին. - Աստվոր ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

Ասաց. - Խաց կերակուր պերեքյ, ուտենքյ:

Խաց կերակուրն էկավ, ինոնքյ կերան, խման, կշտացան:

Ասաց. - Բափա՛ղ, տյու էլի քյնի:

Լաճն էլա̈վ կնաց տյուս: Փետեր խանեց, իթա̈լ գյետին, ա̈րա̈բներ թռան տյուս.

- Իգյի՛թ, աստվոր ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

- Նա̈՛ ավիրեքյ, նա̈՛ շինեքյ: Քառսուն խա̈զա̈ր խատ չիլ ճավռաչ դնե կուզեմ, ինոնց պեռներն էլ ակնունքյ, ջավահիր էլնի, վաղ առատուն թակավրու տռան առճև պատրաստ կուզեմ:

Առատուն բաբալղ էլա̈վ վեր, ինգյա̈վ դևեհտերաց առաճ, տարավ թակավրու տռան վերեն:

Խա̈բա̈ր տարան թակավրուն, թե՝ քյո ուզածն էկավ:

Վա̈զիրն ասաց. - Թակավո՛ր, իսոր կեսն առ, կես թե ետ ս[illegible]ցի:

-.Վա̈զիր, թո պիրի, հելա իսոր տակ շատ պա̈ն կա:

Բաբա՛ղ դնեն թասլիմ արաց, կնա̈ց նստավ վեր աթոռան:

- Է՛, - ասաց, - բաբա՛ղ, տյու իմ ուզածն պերիր, քյեզնից կուզեմ քյառսուն խա̈զա̈ր խատ քյոչ, բռներաց բյութուն ակնունք, ջավահիր կախ էլնի: Կպիրես՝ կպիրես, չես պիրե՝ քյո վիզ կզա̈նեմ, քյո լաճուն էլ խետ:

Բաբալղն ի էկավ տուն մոթավ, մալուլավ, կուլա գյեռ:

Լաճն էկավ. - Բաբա՛ղ, ի՞նչ էլե քյե, կուլա̈ս:

Ասաց. - Ես չիլա̈մ, ապա ո՞վ իլա̈:

Քառսուն խա̈զա̈ր խատ քյոչ կուզի, բռներաց բյութուն ակնունքյ. ջավահիր կախ էլնի: Էսա հմեն որտեղի՞ց:

- Ըղտերն որ տեղից էկան, էնոնքյ էլ էն տեղից:

Նստուսն ինոնց խաց կերակուր կերան, բաբալղ ուր լաճ:

Ասաց. - Դե՛, էլի կնա քյո տեղ պառկի, առավոտ էլի քյոչեր տար:

Խալիվոր կնա̈ց պառկավ: Լաճն էլա̈վ տյուս, ուր փետեր թա̈լեց գյետին, ա̈րա̈բներ էլա̈ն տյուս:

Ասին. - Է՛յ, իգյիթ. աստվոր ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

- Նա̈՛ ավիրեքյ, նա̈՛ շինեքյ:

Քառսուն խազ՚որ խատ քյոչ կուզեմ. բոներաց ակնունքյ ջավահիր կախ էլնի:

Բաբսւղ էլավ վեր, առեց քյոչեր. ինգյմ̈վ առճև. տարավ թակավրու կոնախ, թւսլիմ արաց:

Վ̈ազիրն ասաց. - Թակավոր ապրած կենաս, էսա տղեն մի չարչարի, ախչիյղ տու, թո տանի:

Ասաց. - Վազիր. քյե խառվելիքյ չկա. իսոր տկեն շատ պ̈ն տյուս կուգյա:

Բաբալղ աարրաստ էլավ կնաց մո թակավոր:

Ասաց. - Բաբա՛ղ, ես իմ աղչիկ տվի քյո լաճուն, քյառսուն խատ երիտասարթ՝ ճագուստներ մեյ լբազ. մեկն մալ, քյառսուն խատ էլ աղչիկ՝ ճագուստներ մեկ նմուշ: Մեր կոնխի առճվեն խալիքյ փռվի. չուր ծեր կոնխի ւ̈առաճ փռվի: Ծասխի էրկու կողմից վարթի բյութեքյ զարկուկ էլնի, որ խով անի վեր իմ աղչկան: Դե էլի կնա, բաբա՛ղ, քյո խարսի խրեր պե, առ աղչիյս կնա:

Խալիվորն էլավ էկավ ուր տուն, շատ դրղմավ: Ուրենց խաց, կերակուլն կերան:

- Դե՛. էլի կնա քյնի, բաբա՛ղ: Առավոտ էլի ինգյի խարսխրի առ̈աճ կն̈:

Լաճն էլավ տյուս, փետեր իթալ զյետին:

Արմ̈բներն էլան տյուս, ասին. - Աստվորն ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

- Նմ̈՛ ավիրեքյ, նմ̈՛ շինեքյ, ծեզնից կուզեմ քյառսուն խատ երիտասարթ ճագուստներ մեկ լբազ, մեկ կերպ, քյառսուն խատ էլ աղչիկ՝ մեկ նմուշ խալվով, ուրենց չալկիներով, մեր տռան մ̈ռճվեն չում թակավրու տուռ խալի փռվի ճմ̈մխի վերեն, վարթի բյութեքյ էն կող, էն կող խով անեն:

Առատուն բաբալղն էլմ̈վ վեր. ինգյմ̈վ խարսխրի մ̈ռճև չալկիով, կնմ̈ց թակավրու սարի մ̈ռճև կայնավ:

Վ̈ազիրն ասաց. - Թակավո՛ր, իսոնքյ ներս մի առնի, տյու չես կանա, իսոնքյ փերի են:

Խարսխուր կայնավ թակավրու սարի մ̈ռաճ, աղչիկն առեն էկան տուն:

Էկան տուն փսակեցին վեր լաճուն, յոթն օր, յոթ կիշեր խարսնիսն արին:

Քյանիմ օր սորա թակավորն ասաց ուր թակուճուն. - Թակուճի, մեր տղեն շատ չմ̈րչրեցինքյ, պերենքյ մեր տուն ղավաթ:

Մարթ ղրկեցին ետև տղին՝ քյո պատրաստութեն տեսի, թակավոր փլան օր քյե ղավաթ ի արե:

Թակավրու աղչիկն ասաց իրկան. - Ա՛յ մարթ, առավոտ կէրթմ̈ս. քիչմ իմ խեր քույթ չունի. անմեղ մարթ շատ ի պռնե դրե պանտ: Զուր էն պռնավորներ թող չիտաս. ինոր խաց չուտես: Մեյ խատ մ̈րմ̈բմ կա. էն չէլնի թե թողնես, էն զիանքյար մարթ ի:

Թակավրու փեսեն իխան փետեր ջեռբից. իտիր տուն, էլմ̈վ կնմ̈ց, մտավ թակավրու տուն, կնմ̈ց մո թակավոր, ծեռ պաքյեց թակավրուն, կմ̈ճվան շարբաթն խման էտա տեղ թակավորն ուր փեսեն:

Խացի պատրաստութեն տեսան. թակավրու փեսեն ասաց. - Թակավո՛ր, ապրած կենաս. քյո խաց չեմ ուտե:

- Ընչի՞ չես ուտե:

- Հրաման արա զի քյո պռնավորներ թողնեն. որ քյո խացն զի խալալի:

- Քյե խրաման՝ թող իմ պռնավորներ, աման էն մեկ մ̈րմ̈բ չթողնես:

Փեսեն էլմ̈վ ամբողջ պռնավորներ թողեց, խասան մեկ էօդիմ դռան վերեն, թակավորն ասաց. - Իմ ասած մ̈րմ̈բն էսա եի, իսոր չթողնես, իսորից քյե զմ̈րմ̈ր կուգյմ̈:

Արա̈բն ասաց. - Հե՜յ, իգյի՛թ, ամենին գյել էլա. ոչխար կերա, քյե ի՞նչ կերա: Կխնթրես զի եէլ թողնես:

Էլա̈վ ա̈րա̈բին ասաց. - Քյե ի՞նչխ պիտի թողնեմ:

Ասաց. - Մա̈րմա̈ր քյար փորած ի, քյե տրած ենքյ. քյո կողկուշտ զմռսեր են առճճով. անջախ տյու զավթվեր ես. ի՞նչ կերպով քյե թռնեմ:

- Որ կուզես զի թռնել, էլի կնա̈ չարշին. շուշեմ զեթյաղի առ, պե լից իմ կող կուշտ. էն արճճներ կկսկղնան, ես զնջլներ կանամ կտրե:

Տղեն կնաց չարշիից զեթյաղին առեց էկավ, լցեց արաբու կող կուշտ:

Արաբն ասաց. - Իգյի՛թ. կտորմ քյե զատ պախի, զնջլի կտորներ քյե չառնեն:

Զուր թակավրու փեսեն ատյում իթս. արաբ ուր չխչփեց, զնջլի կտոր կտրավ, մեկ կտորն տիպավ լաճու ճայտին: Լաճն ինգյավ՝ գյետին, էսօր ես մեռե, թե էսա տասն օր:

Արաբ էլավ խասավ տեխ լաճ, փտռտեց, փետեր չկտավ վազեց տեխ լաճու կռնախ, տյուռ կոտրեց, մտավ ներս, խասավ տեխ թակավրու աղչիկ. - Հա՛, ճա՛ էսա փետեր կուզեմ քյեզնից:

- Փետն ի՞նչ ի. ես փետ չեմ կիտե, ի՞նչ ի:

Ծեռ իզար դոլաբ կոտրեց, փետերն կնդավ: Առեց թալեց գյետին. ջուխտ արաբ էլան տյուս:

Ասաց արաբ. - Աստվորն ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ:

- Նա̈՛ ավիրեքյ, նա̈՛ շինեքյ. էսա քյոշկ սարեն խե թակավրու աղչկան յոթ դաբաղա գյետնի տակ մտու:

Էն թո էրթա̈ գյետնի տակ, մենքյ տա̈ռնանքյ գյա̈նքյ տեխ լաճ:

Թակավորն ասաց. - Էլե՛քյ մեյ խատ իրիշկացեքյ, խենքյ էսա լաճուն ի՞նչ էլա̈վ, ընչի՞ չէկավ:

Էկան աչկին, տեսան գյեռ, լաճն արնթաթախ, մեռուկ ինգյե մեչ էօդին:

Թակավոր լաճ վիրուց տարավ, բժիշկներ կանչեց, քսանչորս սա̈հա̈թվան մեչ լաճու խելքյն էկավ գյլեոխ:

Տղեն տսնխինգյ օրմ էլ պառկավ, տսնխինգյ օրից վերճ լաճ ժրավ:

- Քո խաց զի խարամ կէնա, - ասաց, - թակավոր. չուր քյո աղչիկ չկնդնեմ, չպիրեմ:

Կաց պա̈րեով արաց թակավրուն, թակուհուն, էլավ տյուս:

Ծատ տեղրանքյ փռաց, շատ լեռներ ընցավ, իսկի պա̈մ չխասկցավ:

Ավուր մեկին էկավ մեշիմ մեչ նստավ վեր ախպրին, ճյուր խմավ, ասաց. - Մեյ կտոր ըստեղ խանգյստանամ:

Աչկեր տայճցավ, չտայճցավ, ջուխտմ եղունիկ էկան, թառան վեր ծառին:

Մեյ եղունիկ մեկէլ եղունկան ասաց. թե. - Քյեռ՛ր, տյու կիտե՞ս էսա լաճ վո՞վ ի, պառկե էսա տեղ:

Ասաց. - Թակավրու լաճն ի, էն կա̈նդա̈ր չա̈րչա̈րա̈նքյ քյնշեց. չում թակավրու աղչիկն առեց: Արա̈բն էլավ ինոր կնիյն առեց. էճավ գյետնի տակ:

Ասաց. - Ինոր ճա՞ր:

- Ինոր ճար կա, որ ականջ վեր մե պախի: Էլնի էսա ա̈խպրին ճրի խետ էրթա̈ մե կտոր ցածր. դաստեմ ձներպյուկ ծաղիկ քյաղի, դաստեմ էլ էն մեկէլ ծաղկից, էրկու խատ էլ էնա կա̈ղիֆա ծաղկից քյաղի. էրթա̈ էնա ցածր դա̈շտի մեջ, էն տեղրանքյ արև զա̈րկե, խոդեր պատռտե. էսա մեյ կա̈դիֆա ծաղիկ տնգյի մեչ էն

պատռածին, տյուռմ կպա̈ցվի. քյառսուն մատ թա̈րա̈նչսւ կիճնի ցածր. Էսա ծաղկներ որ կա, տանի էն տեն տնգյի, խավող տնգյի. թե յոթն տարուց խավող կուգյա, հասիլաթ յոթն օրեն կուգյա: Խավող կթի, քյամի. անի շիրա. շուշեմ կլցի. կառնի կէրթա խմցուցի արաբուն, արա̈բ շարխոշնա, էն գյա̈խ թող ինոր սպանի:

Մարթ լա̈վ: Էլավ վեր, կնա̈ց էն ծաղկներ քյաղեց. տարավ տնգյեց խողի պատռածի մեչ: Գյետին պացվավ. քյառսուն մատ թա̈րա̈նջա էրևաց. լաճն էճավ կնա̈ց տակ: Կնա̈ց մոտ ուր կնիկ:

Կնիկն ասաց. - Էկար ի՞նչ. արաբն յոթն օր կքնի, յոթն օր սորա նոր կէլնի վեր:

Տղեն կնա̈ց ծաղիյ տնգյեց, ծաղիյն էլավ խավողի թյուփ, խավող իտուր ուր իգյին կթեց, քյամեց, էլավ շուշեմ լցեց. տարավ իտուր կնգյան:

Ասաց. - Էսա տար խմեքյ, չուր առատուն, խենքյ ի՞նչխ կէլնի:

Տարավ սեղան պատրաստեց, ա̈րա̈բ և թակավրու աղչիկ խման, խլսան:

Արաբ ասաց. - Քյաշկե մե քյիչ էլ էլներ խմինքյ, էսա քիչ էր:

- Առավոտ շատ կպիրեմ, արա՛բ, - ասաց աղչիկն, - տյու մի մտածե:

Առատուն լաճն տիկմ իլին լցրեց, տարավ իտուր ուր կնգյան:

Ասաց. - Առատուն տիկմ կկապես քյո բոկի տակ, մեկ ինքյ կխմի, մեյ կուտա քյե, տյու շուռ տու մեչ տկին, թո էն շուռ տա ուր փոր, չէլնի տյու խմես, թե չէ՝ կշարխոշնաս:

Կնիյն առեց գյինին, տիկմ կապեց ուր բոկի տակ, ա̈րաբ մեյ զինքյ կխմե. մեյ կուտա կնգյան:

Կնիկ ուշիկմ շոտ կուտա մեչ տկին:

Ա̈րա̈բ շարխոշն կինի:

Կնիյն թակավրու լաճուն կկանչի. կասի. - Էսա ի, էլ չխմե. խետ խելքյն էկավ գլեոխ: Արե՛, թե մարիֆաթմ ունես, խոջի:

Տղեն կուգյա, էտա կոնխի մեչ կփոա, մեյ պյոտղյուն չկանա կղնե: Կիրիշկա: Թորվան ական մեչ ա̈րա̈բու թուր կտիսնա, կխանի տյուս թուրն. կխասնի վեր արաբին, ինոր վիզ կկտրի:

Էլավ էն կա̈նդա̈ր փռաց, ուր փետեր չկարցավ կնղներ:

Մեկ էլ իրիշկաց տեսավ, փետի մեկ ղորեր ի մեկ մեչ ակնջին. մեկէլն՝ էլ մեկէլին, կողպեսով էլ կոծեր էր: Կողպեսներ կոտրեց, փետերն իխան, թա̈լեց գյետին:

Էրկու ա̈րա̈բներ տյուս թռան. - Աշխարհ ավիրե՞նքյ, թե՞ շինենքյ, - ասին:

- Նա̈՛ ավիրեքյ. նա̈՛ շինեքյ. ըսկնեմ օր տյուք ո՞ր տեղն իքյ. պետքյ չունեմ ծե:

Ասին. - Ընչի՞ կպա̈րկանես, էսա փետեր վիր ծեռն էլնի. էն մարթուն մենքյ կծառայենքյ, կուզե՞ս ա̈րա̈բն ակխցուցենքյ, էլնի քյե սպանի:

Թակավրու աղչիկն ուր իթա̈լ վեր ա̈րա̈բներաց ծեռ-ոտաց, աղաչանքյ ինգյավ. սիրտ շախեց ինոնց:

- Դե ասա, քյո ուզածն ի՞նչ ի, կկատարենքյ:

- Առա̈ճ մեր սարեն ո՞ր տեղն էր, էնտեղ պիտի ղնեքյ:

Ա̈րա̈բներ պերին քյեոշկ-սարեն տրին ուր առճին տեղ: Առավոտ թակավորն էլա̈վ տեսավ, ուր թակուհուն ասաց. - Թակուհի, մեր փեսի քյոշկ-սարեն էրևաց էլմ:

Թակավոր էլավ փեսեն կանչեց դա̈վա̈թ, կերան-խման, իրեքյ օրով ետ թակավոր ճամխեց փեսին ուր տեղ: Էնոնքյ խասան ուրենց մուրազին, տյուքյ էլ՝ ծեր: